ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ – 70

Լրացավ անվանի հնագետ-պատմաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Քալանթարյանի ծննդյան 70-ամյակը: Ա. Քալանթարյանն անցել է իր մասնագիտությանն անմնացորդ նվիրված վաստակաշատ գիտնականի արգասաբեր ուղի:

Ծնվել է 1937-ին, Մեծ եղեռնից փրկված, Աբխազիայում հանգրվանած ակնեցի մանկավարժի ընտանիքում: 1954 թ. Ա. Քալանթարյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որը բարձր առաջադիմությամբ ավարտել է 1959 թ.: 1961–1964 թթ. ուսանել է Գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրայում «Հնագիտություն» մասնագիտությամբ՝ աշակերտելով հայագիտության ամենաառաջատար գիտնականներից մեկին՝ Կարո Ղաֆադարյանին: Վերջինիս ղեկավարությամբ Ա. Քալանթարյանը մասնագիտացել է Հայաստանի միջնադարյան հնագիտության, պատմության և վիմագրագիտության մեջ՝ անցնելով հայագետ-պատմաբանի տքնաջան, միևնույն ժամանակ խիստ հիմնավոր դպրոց: Այս շրջանում նա սկսել է ակտիվորեն մասնակցել իր ուսուցչի ղեկավարած՝ միջնադարյան Հայաստանի հռչակավոր մայրաքաղաք Դվինի հնագիտական պեղումներին, որը և կանխորոշելու էր ապագա գիտնականի հետագա ուղին՝ ասպիրանտից աստիճանաբար վերաճելով պեղումների հմուտ ու բազմափորձ ղեկավարի: Ա. Քալանթարյանը ասպիրանտական տարիներից սկսած ակտիվ մասնակցություն է ցուցաբերել հնագիտական մի շարք նշանավոր հուշարձանների պեղումներին՝ Գառնի, Արմավիր, Արտաշատ: Նա ղեկավարել է Օշականի, Սպիտակի, Պտղնիի և Գոգարանի արշավախմբերը:

1964 թ. Քալանթարյանն աշխատանքի է անցնում ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին և միջնադարյան հնագիտության բաժնում որպես կրտսեր գիտաշխատող: 1966-ին նա հաջողությամբ պաշտպանում է իր թեկնածուական թեզը՝ «Դվինի նյութական մշակույթը 5–8-րդ դդ.» խորագրով:

1969–1971 թթ. նա եղել է Հայպետշինի հուշարձանների վերականգնման գիտաարտադրական արվեստանոցի գիտահետազոտական բաժնի վարիչը և գործուն մասնակցություն ցուցաբերել հուշարձանների վերականգնման ու գիտական փաստաթղթերի կազմման աշխատանքներին: Այս շրջանում նա ղեկավա-

րել է Տաթևի հուշարձանախմբի պեղումները, մասնակցել Դսեղի ազգագրական թանգարանի կազմակերպման աշխատանքներին:

1986 թ. Արամ Քալանթարյանը ղեկավարել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Նորակառույցների հնագիտության բաժինը, որի խնդիրն էր հետևել, կորստից փրկել, ուսումնասիրել այն հուշարձանները, որոնք հայտնվում էին շինարարական հրապարակներում: Այս տարիներին է, որ ի հայտ են եկել Քալանթարյան գիտնականի կազմակերպչական մեծ ունակությունները: Նրա գործուն ղեկավարությամբ բաժինը կարճ ժամանակամիջոցում մի քանի աշխատողից վերածվում է ընդարձակ ենթակառուցվածքի և դառնում հզոր միավոր ինստիտուտի մեջ: Նրա մասնակցությամբ հանրապետության նորակառույցներում պայմանագրային եղանակով կազմակերպվել և աշխատել է շուրջ 40 արշավախումբ, պեղելով, գիտության համար փրկելով այնպիսի կարևորագույն հուշարձաններ, ինչպիսիք են Հոդմիկը, Քարաշամբը, Լճաշենը, Լոռի բերդը, Վերին նավերը, Գետաշենը և այլն:

Ա. Քալանթարյանի գիտագործնական աշխատանքի կենսագրության մեջ իր տեսակարար կշռով ու արժեքով առանձնանում են Հնագիտության և ազգագրության ինստիտուտում նրա բեղուն ու տքնաջան տնօրինության տարիները (1993–2006 թթ.): 90-ական թվականները, անկախության, տնտեսական դժվարությունների այն տարիներն էին, երբ քայքայման եզրին էին հասնում և փակվում գիտական կենտրոններ: Այս շրջանում Հնագիտության և ազգագրության ինստիտուտը ոչ միայն կադրերի հոսք չունեցավ, այլև նրա կազմակերպչական հմուտ ղեկավարման շնորհիվ զգալի չափով աշխուժացան ինստիտուտի գիտահետազոտական և գիտագործնական աշխատանքները: Քալանթարյանը միաժամանակ ինստիտուտին կից գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է: Անդամ է նաև մի քանի այլ ինստիտուտների գիտական խորհուրդների, ղեկավարում է հայագիտության գծով թեմաների փորձագիտական հանձնաժողովի աշխատանքները:

Մեծ է Ա. Քալանթարյանի վաստակը հայ միջնադարյան նյութական մշակույթի հետազոտման բնագավառում: Նա մենագրական աշխատություններ է նվիրել հատկապես Դվինի հնագիտական ուսումնասիրությանը, ինչի արդյունքում 1970 թ. «Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշարով լույս է տեսել «Դվինի նյութական մշակույթը 4–8 դդ.» մենագրությունը, 1976 թ. «Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները 1964–1970 թթ.» հաշվետվություն-ուսումնասիրությունը, 1982 թ. «Դվինի վաղմիջնադարյան կնքադրոշմները» (ռուսերեն) մենագրությունը: Իսկ 1990 թ. նա պաշտպանում է դոկտորական ատենախոսություն «Միջնադարյան Դվին քաղաքը» թեմայով, որը կարևոր ներդրում էր հայ միջնադարյան քաղաքների հնագիտական հետազոտությունների պատմության մեջ:

1970–80-ական թվականներին Ա.Քալանթարյանը Ս. Եսայանի հետ պեղումներ է իրականացրել Օշական գյուղի մերձակա «Դիդի կոնդ» հնավայրում: Այս նշանավոր հուշարձանի պեղումների արդյունքներն ամփոփվեցին «Օշական I» գիտական հաշվետվություն (ռուսերեն, Ս. Եսայանի համահեղինակությամբ)

արժեքավոր աշխատության մեջ: 1988 թ. Հ. Ջանփոլադյանի համահեղինակությամբ, Ա. Քալանթարյանը հրատարակում է «Հայաստանի առևտրական կապերը 6–13-րդ դդ.» ռուսերեն աշխատությունը:

Նշանավոր գիտնականի վաստակը մեծապես գնահատվել է միջազգային գիտական շրջանակներում, ինչին նպաստեց նաև 1996 թ. Փարիզում ֆրանսերեն «Մերձավոր Արևելքի քաղաքակրթությունը» մատենաշարով լույս տեսած Դվինի պատմությանն ու հնագիտությանը նվիրված "Dvin Histoire et archaeologie de la ville medievale" *ստվարածավալ մենագրությունը:*

2005 թ. Հ. Մելքոնյանի համահեղինակությամբ Ա. Քալանթարյանը հրապարակել է «Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ.» ուսումնասիրությունը, որը գիտական արժեքին զուգահեռ, կարևոր ձեռնարկ է բուհերի ուսանողության համար:

Ա. Քալանթարյանի բեղուն գործունեության անքակտելի մասն է ավելի քան երկու տասնյակ գիտական ժողովածուների, անվանի հայագետների (Քաջբերունի, Աշխ. Քալանթար, Կ. Ղաֆադարյան) աշխատությունների կազմումն ու խմբագրումը:

Գիտնականը բազմիցս հանդես է եկել զեկուցումներով հնագետների և պատմաբանների հանրապետական, նախկին միութենական և միջազգային տարբեր գիտաժողովներում: Նրա աշխատանքները ճանաչում են գտել հայրենական և արտասահմանյան մասնագետների շրջանում:

Ա. Քալանթարյանը տարիներ ի վեր հնագիտական և հայագիտական դասընթացներ է վարում ԵՊՀ-ում, ղեկավարում է ասպիրանտների և հայցորդների գիտական թեմաները՝ մեծապես նպաստելով մասնագիտական կադրերի պատրաստման գործին:

Անգնահատելի է Ա. Քալանթարյանի դերը ինստիտուտի վերջին տարիների նշանակալի այնպիսի հրապարակությունների գործում, որպիսիք են «Գինին հայոց ավանդական մշակույթում» (2005 թ.) և «Հին Հայաստանի ոսկին» (2007 թ.) թե՛ որպես հեղինակ, թե՛ որպես խմբագիր:

Ա. Քալանթարյանը, իր գիտակազմակերպչական հմուտ ձիրքով ամենօրյա մասնակցություն է ցուցաբերել ինստիտուտի գիտակազմակերպական աշխատանքների վերընթացին: Իր համեստ, շիտակ բնավորության, ընկերներին օգնելու պատրաստակամության և գիտական վաստակի շնորհիվ նա ինստիտուտի կոլեկտիվում և, առհասարակ, գիտական շրջանակներում վայելում է հարգանք ու մեծ հեղինակություն: Այսօր Ա. Քալանթարյանը ինստիտուտի տնօրենի խորհրդականն է և շարունակում է իր բեղուն գործունեությունը:

Ցանկանում ենք վաստակաշատ գիտնականին քաջառողջություն, գիտական նորանոր ձեռքբերումներ:

ՀՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ